

2010-05-17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վահան Հովհաննիսյանի, Կարեն Վարդանյանի, Արա Նոսնյանի, Արտյուշ Շահբազյանի, Արծվիկ Մինասյանի և Արմեն Ռուստամյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

1. 1-ին հոդվածով կատարվող լրացման առաջին պարբերության երկրորդ նախադասությունը «մարմնի» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «ինչպես նաև պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների» բառերով:

2. Առաջարկում ենք նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր դրույթով.

«Մույն օրենքի ընդունումը պետության համար չի առաջացնում «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով

և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված փոխհատուցման պարտավորություն:»:

3. Առաջարկում ենք 2-րդ հոդվածում «պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերը փոխարինել «2011 թվականի հունվարի 1-ից» բառերով:

4. Օրենսդրական տեխնիկայի առումով`

1) 1-ին հոդվածում «ավելացնել» բառն անհրաժեշտ է փոխարինել «լրացնել» բառով` հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները.

2) 1-ին հոդվածով կատարվող լրացման մեջ «ոստիկանության գործառույթներ իրականացնող պետական կառավարման մարմնի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ոստիկանության բնագավառի լիազոր մարմնի» բառերով:

Ելնելով շարադրվածից` Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր ներկայացրած առաջարկությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունում ավարտին են մոտենում նախապատրաստական աշխատանքները, և մոտ ապագայում Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական կայք էջում կտեղադրվի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների պետական կամ համայնքային հիմնարկների բյուջեներով ու արտաբյուջետային միջոցներով կատարված դրամարկղային գործառույթների մասին ամբողջ տեղեկատվությունը:

Հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստան-
AJV-18-11 2010-05-13

նի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մալխասյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ

Պ-873-15.04.2010-ԳԿ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացում կատարելու մասին

ՀՈԴՎԱԾ 1. «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-11-Ն, 23 սեպտեմբեր 2003թ.) 7-րդ հոդվածում ավելացնել նոր՝ 7-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«7. Պետական կառավարման մարմինները եւ Երեւան, Գյումրի, Վանաձոր քաղաքների տեղական ինքնակառավարման մարմինները պետք է ունենան ինտերնետային կայք էջ, որտեղ տեղադրվում են սույն հոդվածի 3-րդ մասում նշված տեղեկությունները, ինչպես նաեւ բյուջետային եւ արտաբյուջետային միջոցների մուտքերի եւ կատարված ծախսերի վերաբերյալ տեղեկություններ՝ ըստ ուղղությունների: Բյուջետային եւ արտաբյուջետային միջոցների մուտքերի եւ կատարված ծախսերի հրապարակայնության վերաբերյալ վերը նշված դրույթը չի տարածվում ազգային անվտանգության եւ պաշտպանության ոլորտներում լիազոր մարմինների եւ ոստիկանության գործառնություններ իրականացնող պետական կառավարման մարմնի վրա:

Տեղեկատվությունը պետք է տեղադրվի կատարված բյուջետային եւ արտաբյուջետային միջոցների մուտքերի եւ ծախսերի գործարքների կատարումից ոչ ուշ քան 10 - օրյա ժամկետում:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Տեղեկատվության ազատության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու նպատակն է` ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանրության համար ավելի թափանցիկ դարձնել պետական կառավարման մարմինների եւ Երեւան, Գյումրի, Վանաձոր քաղաքների տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը, կանխել կոռուպցիոն ռիսկերը, բարձրացնել բյուջետային եւ արտաբյուջետային միջոցներից կատարվող ծախսերի արդյունավետությունը, որը կառաջացնի ծախսերի վերահսկելիություն եւ առաջ կբերի պետական մարմինների նկատմամբ վստահություն: Օրենսդրական առաջարկության ընդունումը թույլ կտա նաեւ իրացնել հարկատուների իրավունքը տիրապետել իրենց կողմից վճարվող հարկերի ծախսման եւ պետական մարմինների ֆինանսական եւ տնտեսական գործունեության արդյունավետության վերաբերյալ տեղեկատվությանը:

Առաջարկվող մոտեցումը հնարավորություն է տալիս նպաստելու տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն ու արդի ժամանակաշրջանում տեղեկատվության հասանելիությանը: